

ղեր, եւ ծաղկեցուցած մանաւանդ ծխախոտի մշակութիւնը: Ռուսական ծխախոտի այս կողմանց ծաղկման մէջ ղլխաւոր բաժինն ասոնք ունին: Ասոնց մասին ընդարձակօրէն գրած է Յ. Մուրատեան<sup>1</sup>, որ Սեւ-ծովու այս ափերը սփռուած Համէնցւոց թիւը կը դնէ իբր 2500 տնէ աւելի, իբր 15.000 տնէ: Ասկէ յամենայն դէպս շատ աւելի է Թուրքիոյ մէջ ապրող քրիստոնեայ Համէնցւոց թիւը. միայն Տրապիզոնի շրջակայքն իբր 20 դիւղ կը հաշուին: Իսկ մահմետական եղածներուն թիւն ալ ի հարկէ մեծ է: Բուն Համէնի համար Բոխ իւր ժամանակ կ'ըսէր իբր 8000 հոգի (Բոխ, էջ 25): Սեւ-Գետի եւ յարակից Եօմուրայի շրջանին մահմետականացած Հայերն արդէն այն ժամանակ գոնէ այնչափ ըլլալու էին: Ուրիշ աղբիւր մը մինչեւ անգամ Համէնի համար իբր 10.000 տուն կ'ըսէ, Սեւ-Գետի իբր 6000 տուն, ո՛չ թէ տնէ: Թուրքիոյ մէջ սակայն վիճակագրականք ընդհանրապէս զնահատական միայն արժէք ունին. կառավարութեան այն իբր թէ պաշտօնականք

<sup>1</sup> «Համէնցի Հայեր ազգագրական նիւթեր», Տփղ. 1901. Նախ՝ «Ազգագրական Հանդէս», Գիւրքե.—Ջ., 1898—1900: